«ԵԳԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

«ԵԳԱՆՅԱՆԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ»

Հնագիտական 2-րդ հանրապետական գիտաժողով

03 հունիս 2022

ԳՅՈՒՄՐԻ

ՀՀ ԳԱԱ ՇԻՐԱԿԻ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ

http://www.shirakcenter.sci.am

ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԾՐԱԳԻՐ

03 հունիս 2022 թվական

[ք. Գյումրի, Վազգեն Սարգսյան 5Ա](#)

Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գրադարան (3-րդ հարկ)

Լիազումար նիստ

Զեկուցման տևողությունը՝ 10 րոպե
Հարց ու պատասխան՝ 5 րոպե
Քննարկումներն՝ օրվա ավարտին

11:00-11:40 – Մասնակիցների գրանցում

11:45-11:55 – Ողջույնի խոսք
Արմեն Հայրապետյան, ՇՀՀԿ տնօրեն, պ.գ.թ., դոցենտ

12:00-12:15 – Շիրակավանի զարգացած երկաթի ժամանակաշրջանի դամբարանները

Պետրոսյան Լևոն, Խաչատրյան Համազասպ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, ՇԵԹ

12:20-12:45 – Սուրճի ընդմիջում

Բաժանմունքի աշխատանքներ
ՇՀՀԿ գրադարան

12:50-13:00 - Շիրակի նեոլիթ-էնեոլիթյան հնավայրերը

Պետրոսյան Արթուր[1, 2], Հայդոսյան Հայկ [1, 3], Ադիգյոզալյան Անի[1, 4], Գասպարյան Բորիս[1, 5]

1. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ, 2. «Արենի-1 քարայր» ԳՀ, 3. ՇԵԹ 4. ՀՊԹ, 5. ԵՊՀ

13:05-13:15 - Կառնուտ. կուր-արաքսյան բնակատեղիի պատմության շուրջ (ըստ 1981-1990 և 2016-2021 թթ. պեղումների արդյունքների)

Բաղալյան Ռուբեն, Աղիկյան Լևոն, Հարությունյան Արմինե, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

13:20-13:30 - Հացառատի ավերված ուրարտական դամբարանը

Սիմոնյան Հասմիկ, Փիլիպոսյան Աշոտ, Զաքյան Տիգրան, ՊԱԹ և ՊՄՊԾ ՊՈԱԿ

13:35-13:45 - Հայաստանի բրոնզ-երկաթի պարբերաշրջանի քառանկյուն աշտարակատիպ շինությունները

Մկրտչյան Լևոն, ՊԱԹ և ՊՄՊԾ ՊՈԱԿ

13:50-14:00 - Մանղալ կոչված խեցանոթների գործառությունը

Խաչատրյան Համազասպ, ՇՀՀԿ

14:00-14:10 - Արագածի հյուսիսարևմտյան լանջերի ուշբրոնզեդարյան պաշտպանական համակարգը

Վարդանյան Բենիկ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

14:15-14:25 - Լեռնակերտի 2021 թվականի պեղումների նախնական արդյունքները

Վարդանյան Բենիկ[1], Մկրտչյան Լևոն[2], Մարիբեկյան Մարիամ[2], ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ, 2. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

14:30-14:40 - Կացին-սակրի որպես ապրանքափոխի առաջացման պատմական և ծիսական գործոնները

Զոհրաբյան Արմինե, ՀՊԹ

15:45 – 15:55 **– «Կումայրի » պատմամշակութային արգելոց-թանգարանի պահոցներում պահպանվող Կարմրաքարի դամբարանադաշտից գտնված պատահական գտածոների շուրջ**

Ավագյան Ինգա, ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ

15:00-16:10 - Միջնադարյան Հայաստանի կենդանակերպ տապանաքարերը

Ալեքսանյան Լուսինե, ՊԱԹ և ՊՄՊԾ ՊՈԱԿ

16:15-16:25 **- Ավանի տաճարի 1219 թ. վիմական արձանագրությունը՝ դավանական և տնտեսական հարցերի համատեքստում**

Ղազարյան Ավետիք, ՊԱԹ և ՊՄՊԾ ՊՈԱԿ

16:30-16:40 **- Արարատյան դաշտի 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը. Մասիս գյուղի սուրբ Աստվածածին եկեղեցի**

Աբրահամյան Համազասպ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

16:45-17:00 - ՔՆՆԱՐԿՈՒՄ

Գիտաժողովին մասնակից կազմակերպություններ

1. ՀՀ ԳԱԱ ՇՀՀԿ - ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
2. ՀՀ ԳԱԱ ՀԱԻ - ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
3. ՇԵԹ - Շիրակի երկրագիտական թանգարան
4. ՀՊԹ - Հայաստանի պատմության թանգարան
5. ՊԱԹ և ՊՄՊԾ ՊՈԱԿ - Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ
6. ԵՊՀ - Երևանի պետական համալսարան
7. «Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամ

ԶԵԿՈՒՑՈՒՄՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՅԹՆԵՐ

1. ԱՐԹՈՒՐ ՊԵՏՐՈՍՅԱՆ[1, 2], ՀԱՅԿ ՀԱՅԴՈՍՅԱՆ[1, 3], ԱՆԻ ԱԴԻԳՅՈԶԱԼՅԱՆ[1, 4], ԲՈՐԻՍ ԳԱՍՊԱՐՅԱՆ[1, 5]

1. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, 2. «Արենի-1 քարայր» գիտահետազոտական հիմնադրամ, 3. Շիրակի երկրագիտական թանգարան 4. Հայաստանի պատմության թանգարան, 5. Երևանի պետական համալսարան

ՇԻՐԱԿԻ ՆԵՈԼԻԹ-ԷՆԵՈԼԻԹՅԱՆ ՀՆԱՎԱՅՐԵՐԸ

Շիրակի նեոլիթ-էնեոլիթյան շրջափուլին պատկանող հնավայրերը չեն արժանացել համակարգված ուսումնասիրության, չնայած որ առաջին առարկան այստեղ պատահականորեն հայտնաբերվել է Լ. Միքաելյանի կողմից դեռևս 1951 թ., Անի-Պեմզա բնակավայրի մոտ: Այն ներկայացված է կարմրավուն վանակատից պատրաստված կոնաձև միջուկի լավ պահպանված օրինակով:

Նեոլիթյան դարաշրջանի սկզբնափուլերին (վաղ հոլոցեն) պատկանող ոչ մեծ հավաքածու փաստագրվել է 1979 թ. անվանի հնագետ Ֆ. Տեր-Մարտիրոսովի կողմից՝ Շիրակավանի անտիկ բնակատեղիի պեղումներից: Այս իրերը հայտնաբերվել են Ախուրյանի ստորին դարավանդից՝ Սևակն վտակի հետ միախառնման կետում: Հավաքածուն ներառում է օձաքարից պատրաստված՝ հղկված փոքրիկ կացին և սև վանակատից ձևավորված «ափնագյուղյան» տիպի գործիք, որոնք հնարավորություն են տալիս այն հասակագրել Ք.ա. VIII հազարմյակի վերջին քառորդով և VII հազարամյակի առաջին կեսով: Այսուհանդերձ, գտածոների հնագիտական համատեքստի կամ շերտագրական իրավիճակի մասին տվյալները բացակայում են: Հոլոցենի սկզբնափուլերին բնորոշ՝ «ափնագյուղյան» ավանդույթին բնորոշ գործիքներ հայտնաբերվել են նաև հայ-ֆրանսիական արշավախմբի 2006-2011 թթ.՝ Աղվորիկի վանակատե և դացիտե հումքի աղբյուրների հարևանությամբ գտնվող բացօթյա հնավայրերից: Վերջիններիս տեխնիկա-մորֆոլոգիական առանձնահատկությունները բնորոշ են Ք.ա. XI-IX հազարամյակների ժամանակագրական միջակայքին: Էնեոլիթյան դարաշրջանի վանակատե և կայծքարե առարկաներ հայտնի են նույն անտիկ Շիրակավանի, ինչպես նաև Բենիամինի հնագիտական համալիրի 1995-1996 թթ. պեղումներից, որոնք ներկայացված են միջուկներով, սեղմման եղանակով շփածված շեղբերով, նետասլաքներով և այլնով: Այդպիսի օրինակները բնորոշ են Հայաստանի՝ Ք.ա. 4300-3400 թթ. հասակագրվող ուշ էնեոլիթյան հուշարձաններին:

2. ՌՈՒԲԵՆ ԲԱԴԱԼՅԱՆ[1], ԼԵՎՈՆ ԱՂԻԿՅԱՆ, ԱՐՄԻՆԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
1. Պատմական գիտությունների դոկտոր

ԿԱՌՆՈՒՏ. ԿՈՒՐ-ԱՐԱՔՍՅԱՆ ԲՆԱԿԱՏԵՂԻԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ (ԸՍՏ 1981-1990 ԵՎ 2016-2021 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ)

2016 թվականին՝ 25 տարի ընդմիջումից հետո, վերսկսվեցին Կառնուտի կուր-արաքսյան հուշարձանի պեղումները: Միմյանցից մի քանի հարյուր մետր հեռավորության վրա գտնվող պեղավայրերում իրակա-

նացված աշխատանքների շնորհիվ բացահայտվեցին դամբարանադաշտ և բնատակեղիի երկու հատված, ավելի հավանական է, ԿԱ II շրջանակներում երկու համաժամանկյա, սակայն ակնհայտորեն հաջորդաբար բնակեցված բնակատեղիներ, որոնք ներկայացված են միատիպ ուղղանկյուն քարե կառույցներով և պարունակում են համանման՝ կառնուտ-շենգավիթյան տիպի, խեցեղեն նյութ: Բնակատեղիներում արձանագրված իրավիճակները սկզբունքորեն տարբերվում են մեկը մյուսից թե՛ նյութի քանակով, դրա պահպանվածության աստիճանով, թե՛ մանր գտածոների և in situ իրավիճակների առկայությամբ կամ բացակայությամբ: Վերոնշյալ պատկերը և դամբարանների առկայությունը, այդ թվում՝ ԿԱ I վերագրվող, թույլ են տալիս քննել հուշարձանի ներքին դինամիկան ԿԱ գրեթե ողջ ժամանակաշրջանի ընթացքում՝ դրա հիմնադրումը, տրանսֆորմացիան, լքումը և վերաբնակեցումը: Նոր տվյալների մի մասը, առաջին հերթին կապված բնակատեղիի հատակագծի, լքման բնույթի, թաղման ծեսի հետ, անկասկած հետաքրքրություն է ներկայացնում և կարող է տարածվել կուր-արաքսյան էկումենայի զգալի մասի վրա:

3. ՍԻՄՈՆՅԱՆ ՀԱՍՄԻԿ ԳԱԳԻԿԻ, ՓԻԼԻՊՈՍՅԱՆ ԱՇՈՏ ՍՈՒՐԵՆԻ[1], ԶԱՔՅԱՆ ՏԻԳՐԱՆ ՍԱՄՎԵԼԻ

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ

1. պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ՀԱՑԱՌԱՏԻ ԱՎԵՐՎԱԾ ՈՒՐԱՐՏԱԿԱՆ ԴԱՄԲԱՐԱՆԸ

Զեկույցը նվիրված է Գեղարքունիքի մարզի Գավառ քաղաքի Հացառատ թաղամասի գերեզմանոցում պատահաբար հայտնաբերված հնագիտական և մարդաբանական նյութերին: Հավաքածուի մեջ հատկապես կարևոր են հավասարաչափ, դեպի վեր լայնացող իրանով և շեփորաձև շուրթով կարմիր փայլեցված երկկանթ սափոր-սկահակը, վարդյակատիպ մատնեքավոր իրանով քրեղանը, երկու ազաթե գնդաձև մեծ ուլունքահատիկները, կենդանու ողերից պատրաստված, փորագրազարդ ներդիրները, երկաթե ասեղ-լեզվակով բրոնզե շիգը, հավանաբար համրիչի մաս հանդիսացած գիշերաքարի 3 ուղղանկյուն, փոքրիկ հատիկները, երկաթե դաշույնների և նիզակների մնացորդները, արծաթե ականջօղը և այլն: Գտածոներն իրենց զուգահեռներն ունեն Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. VIII-VII դդ. ուրարտական մի շարք հուշարձաններում (Էրեբունի, Արգիշթիխինիլի, Կարմիր բլուր, Գեղհովիտ, Բաստամ, Ալթըն թեփե, Վան և այլն):

Հնագիտական և հնամարդաբանական նյութերը մաքրվել և վերականգնվել են «Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի թանգարանային առարկաների վերականգնման լաբորատորիայում:

Հնամարդաբանական նյութերի ուսումնասիրման ու վերականգնման արդյունքում պարզ դարձավ, որ դամբանախցում թաղվել են 5 չափահաս անհատներ: Դժվար է պարզել, թե դրանցից կոնկրետ ում է պատկանել դամբարանը, քանզի կմախքների նախնական դիրքը խաթարվել է շինարարական աշխատանքների ընթացքում: Այսուհանդերձ, դամբարանային կառույցի պահպանված մնացորդներն ու նրանցում հայտնաբերված արտեֆակտները վերաբերում են Վանի թագավորության (Ուրարտու) ռազմաքաղաքական պատմության վերջին փուլին՝ մ.թ.ա. VII դարին և հետաքրքիր մեկնաբանությունների հնարավորություններ

են ընձեռում: Մասնավորապես, միանշանակ է, որ խնդրո առարկա նյութը համաժամանակյա է Հացառատի գերեզմանատան մոտակայքում գտնվող Բերդի գլուխ ամրոցի ուրարտական շերտին:

4. ՊԵՏՐՈՍՅԱՆ ԼԵՎՈՆ ԱՂԱՍՈՒ[1], ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ ՀԱԿՈԲԻ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Շիրակի երկրագիտական թանգարան
1. պատմական գիտությունների թեկնածու

ՇԻՐԱԿԱՎԱՆԻ ԶԱՐԳԱՑԱԾ ԵՐԿԱԹԻ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ԴԱՄԲԱՐԱՆՆԵՐԸ

Նշենք, որ վերջին տարիներին զգալի աշխատանքներ են կատարվել Շիրակի երկաթեդարյան հուշարձանների՝ հատկապես նորահայտ դամբարանների պեղման և ուսումնասիրության գործում: Այդ իսկ պատճառով մեր ձեռքի տակ գտնվող վերջին տարիներին Շիրակավանի հայտնի դամբարանադաշտում շինարարական աշխատանքների ժամանակ պատահական բացված կիսատ և պեղումներով բացված երկաթեդարյան դամբարանների տվյալները թույլ են տալիս ևս մեկ անգամ անդրադառնալ քննվող ժամանակաշրջանի դամբարանաշինությունը և թաղումներից հայտնաբերված նյութերին:

Մեր կարծիքով, նշված և Շիրակավանի ձիերով թաղումներով մյուս դամբարանները համաժամանակյա են Մինգեչաուրի նմանատիպ թաղումներով դամբանաբլուրների հետ (մ.թ.ա. IX-VIII դարեր): Նույն ժամանակաշրջանին են պատկանում նաև մեր վերը ներկայացված Շիրակավանի №№1-4, №17 (կիսավեր) և 2015 թ. պեղված դամբարաններում:

Իրավիճակն այլ է փիալատիպ և այլ անոթներով ներկայացված դամբարանի պարագայում: Այդպիսիք տեսանելի են միայն Շիրակավանի զարգացած երկաթեդարյան ժամանակաշրջանին պատկանող ամրոցի վերին շերտերում և հանդես են գալիս ուշ ուրարտական նյութերի հետ միասին: Այս նյութերին են հարում նաև ուշ թվագրություն ունեցող մ.թ.ա. VII-VI դարերի Օշականի №№25, 59 և այլ դամբարանների անոթները: Մեր կարծիքով նույն ժամանակաշրջանին է պատկանում նաև ներկայացվող №5-16 և 2010 թ. պեղված դամբարանները:

Ամփոփելով վերջին տարիներին (2008, 2010 և 2015 թթ.) Շիրակավանի հայտնի հնավայրում պատահական բացված դամբարանների ուսումնասիրությունները, կարող ենք փաստել, որ դրանք ներկայացնում են որոշակի գիտական և ժամանակագրական հետաքրքրություն: Այդ դամբարաններից №№ 1-4, 14 և 15 պատկանում են վաղ դամբանաբլուրների մշակույթին, մ.թ.ա. IX-VIII դարերին, իսկ մյուսները նշված ժամանակաշրջանի հաջորդ մ.թ.ա. VIII-VI դարերին: Վերջիններս մեծ կարևորություն ունեն հատկապես մ.թ.ա. VII-VI դարերի տեղական և ուշ ուրարտական ժամանակաշրջաններին պատկանող նյութերի փոխկապակցվածության և փոխազդեցությունների ուսումնասիրության գործում:

5 ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՎՈՆ ԱԼԲԵՐՏԻ

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն
ՊՈԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՐՈՆԶ-ԵՐԿԱԹ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ՔԱՌԱՆԿՅՈՒՆ ԱՇՏԱՐԱԿԱՏԻՊ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանի բրոնզ-երկաթեդարյան ժամանակաշրջաններում առանձնացվել են աշտարակատիպ կառույցներ, որոնք ներկայանում են որպես հուշարձանի առանձին միավորներ, հիմնականում մեկուսի կանգնած՝ կառուցված մեծածավալ կոպտատաշ քարերի չոր շարվածքով (հանդիպում է նաև միդիս եղանակը)։ Սրանց հայտնաբերման համատեքստը հիմնականում նախալեռնային և լեռնային լանդշաֆտն է (916-2080 մ)։ Սրանք հանդիպում են քարացրոններում և առապարներում՝ բարձրադիր, ժայռոտ բլուրների վրա, հազվադեպ՝ հարթեցված, թեք տեղանքներին, դարավանդներին։ Այսպիսի կառույցները գիտության մեջ նույնպես ընդունված է համարել որպես մեգալիթյան։ Հայաստանի մեգալիթյան կառույցներն առաջինը դասակարգելով՝ Ա. Քալանթարն աշտարակները դիտարկեց մեգալիթյան հուշարձանների համատեքստում։ Սակայն, մինչ այդ, այս կառույցներն արդեն հայտնի էին ժողովրդական անուններով՝ «*օղուզի քյալլաֆեք*», «*կալաներ», «օյուղներ», «դիրհես»:* Աշտարակատիպ կառույցներն ըստ հատակագծերի լինում են բոլորաձև, օվալաձև, պայտաձև և քառանկյուն, որը բոլորաձևից հետո այս կառույցների երկրորդ տարածված տեսակն է։ Այսօր արդեն հավաստվել են շուրջ հինգ տասնյակ քառանկյուն աշտարակներ՝ իրենց մի քանի տիպերով կամ ենթատիպերով՝ Արագածի և Հատիսի շրջակայքում (ՀՀ այլ տարածքներում հետազոտությունը շարունակվում է)։ Բացի ՀՀ տարածքից՝ այսպիսի աշտարակատիպ կառույցներ են հավաստվել նաև Վանում, Արդահանում և Ջավախքում։

6. ԽԱՉԱՏՐՅԱՆ ՀԱՄԱԶԱՍՊ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն

ՄԱՆՂԱԼ ԿՈՉՎԱԾ ԽԵՑԱՆՈԹՆԵՐԻ ԳՈՐԾԱՌՈՒԹՅՈՒՆԸ

Հարավային Կովկասի ուշ բրոնզի և լայն երկաթի դարաշրջանների բնակավայրերից (Գեղարոտ, Արագածի Բերդ, Ջրաձոր, Մեծամոր, Շիրակավան, Ծաղկահովիտ, Ուչ-Թեփե, Ուզերլիկ-Թեփե և այլն), հայտնաբերված են «*մանղալ*» կոչված կավե անոթներ։ Դրանք ձգված էլիպսի ձևի, ուղղահայաց պատերով, վերևում բաց և նստուկի վրա երկայնակի օվալաձև բացվածքով անոթներ են, որոնք պատրաստված են ավազի բարձր խտությամբ, վատ մշակված կավից։ Դրանց կիրառական գործառույթը պարզ չէ։ Տարբեր ուսումնասիրողներ դրանք որակել են որպես վառարան, շարժական օջախ, հաց թխելու անոթ, նվիրաբերման տուփ եւ այլն։ Որոշ մանղալների վրա կան այրվածքի հետքեր, սակայն դրանց ներսի կողմը և հատակի արտաքին կողմը, որով անոթը պետք է դրվեր կրակի վրա, մաքուր են։ Գրեթե բոլոր մանղալները պեղված են բնակավայրերի մեջ, հատուկ առանձնացված կառույցներում։ Տվյալ կառույցների մեծ մասը՝ Մեծամորում, Գեղարոտում, Արագածում համարվում են սրբարաններ կամ տաճարներ։ Բոլորի համար ընդհանուր է հատակի վրա 1 կամ մի քանի կավակերտ, կլոր կամ օվալաձև, ոչ բարձր պատերով

ավազանների առկայությունը: Բացի դրանցից, բոլոր կառույցներում կան ոչ մեծ ուղղանկյուն կամ քառակուսի ոչ խորը փոսեր, որոնց մի մասը ունեն քարե պատեր: Փոսերի հարևանությամբ կան քարաշար կամ կավակերտ սեղանաձև փոքր հարթակներ, որոնց վրա եղել են ին սիտու՝ ուղղահայաց դիրքով, կամ ընկած մանղալները: Բոլոր այդ փոսերում հայտնաբերվել է մեծ քանակությամբ մոխիր: Բոլոր նշված կառույցներում կան մեծ կամ փոքր աղորիքներ, իսկ Մեծամորի №2 սրբարանից հայտնաբերվել է նաև կավե դրոշմիչ: Նշված կավակերտ կառույցները, մոխրով լցված փոսերը, մեծ աղորիքները եւ դրոշմիչը թույլ են տվել եզրակացնել, որ դրանք տաճարներ են, աղորիքներով ալյուր են աղացել եւ ծիսական դրոշմավորված հաց թխել:

Մեր կարծիքով այդ բոլոր կառույցները ունեն արտադրական բնույթ: Դրանք եղել են բացօդյա եւ ծառայել են ծխով մսամթերք ապխտելու համար: Աղորիքները ծառայել են ոչ թե հացահատիկ, այլ քարաղ աղալու համար իսկ դրոշմն աղը դրոշմելու համար: Այսպիսով՝ «մաղալ» կոչված անոթներն ունեցել են մսամթերքը ծխով ապխտելու գործառույթ:

7. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ
ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
Պատմական գիտությունների թեկնածու

ԱՐԱԳԱԾԻ ՀՅՈՒՍԻՍԱՐԵՎՄՏՅԱՆ ԼԱՆՋԵՐԻ ՈՒՇԲՐՈՆԶԵԴԱՐՅԱՆ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Ուշ բրոնզի դարում (մ.թ.ա. 15-13-րդ դարեր) թաղման ծեսերի, դամբանային կուռույցների և դրանց միջավայրերի ձևավորման տարրերի, նյութական մշակույթի և այլ առանձնահատկություններով բնութագրվող հատկանիշների համակազմերով, Հայաստանի տարածքում առանձնացվում են մի քանի ենթագոտիներ:

Այդ ենթագոտիներից մեկը տեղորոշվում է Արագած լեռան լանջերին, որի հյուսիսային, հյուսիս-արևմտյան լանջերին փաստագրված և հետազոտված հուշարձանները հնարավորություն են տալիս խոսելու այդ սահմաններում ուրվագծվող նյութական մշակույթի դրսևորումները և հնամշակութային համանման իրողություններով և շերտագրությամբ հանդես եկող, կենսամիջավայրի կազմակերպման և ձևափոխման համանման պատկերացումներ ունեցող հանրությունների և պաշտպանական միասնական համակարգի մասին:

Արարատյան դաշտի և Արագածի հարավային, հարավարևմտյան, հյուսիսարևմտյան և հյուսիսային լանջերի տարբեր հնավայրերից հայտնաբերված առաջավորասիական (միտանիական) կնիքներ և այլ առարկաներ պարունակող հնավայրերով, ուրվագծվում է հնագույն առևտրային այն ճանապարհը, որն համընկնում է ուշբրոնզեդարյան ամրոց-բնակատեղիների ձևավորած համակարգի հետ:

8. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԲԵՆԻԿ[1], ՄԿՐՏՉՅԱՆ ԼԵՈՆ[2], ՍԱՐԻԲԵԿՅԱՆ ՄԱՐԻԱՄ[2]

1. ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն, 2. ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ
1. Պատմական գիտությունների թեկնածու

ԼԵՌՆԱԿԵՐՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՊԵՂՈՒՄՆԵՐԻ ՆԱԽՆԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Լեռնակերտի արշավախումբը շարունակելով նախորդ տարիներին մշակված հետախուզական և հնագիտական աշխատանքները՝ 2021 թվականին ուսումնասիրել է Վարի Բերդի արևելյան լանջին տեղորոշվող «անվաձև կառույցը» (100^2 մ) և Վերի Բերդի №1 դամբանադաշտը՝ պեղելով տասներկու դամբան (№№11-22)։

2021 թվականին բացվել է միջին բրոնզից ուշ բրոնզի դար անցման փուլին (մ.թ.ա. XVI դարի II կես – XV դարի I կես) վերագրվող թաղումներ, որտեղ միաժամանակ հանդիպում են ինչպես միջին բրոնզի վերջն ազդարարող, այնպես էլ վաղ ուշբրոնզեդարյան առարկաներ։

Հիշատակելի են հենապատ-կրոմլեխով եզրագծված, քարային լիցքով, արևելք-արևմուտք ուղղված սալարկղային խցերով ուշ բրոնզից երկաթի դարի անցման փուլին վերագրվող դամբանները, որոնց արևելյան կողմում մշտապես ուղեկցում են կցակառույցները։ Անցումային փուլի այս սալարկղային երկաթեդարյան դամբաններում փաստագրվել են երկշերտ խմբային թաղումներ՝ տարատեսակ ուղեկցող գույքով։

Վարի Բերդի արևելյան լանջին տեղորոշվող շրջանաձև կառույցում՝ բաղկացած կից 8 շինություններից, պեղումներով բացահայտվել է երկու տարբեր մշակութային շերտերի հաջորդափոխություն։ «Անվաձև կառույցի» պեղումներով պարզվել է, որ ամրոցակիր բլրի լանջերը բնակեցված են եղել դեռևս վաղ բրոնզի դարում (մ.թ.ա. 28-25-րդ դարեր), որտեղ ուշբրոնզի և վաղ երկաթի դարերում կառուցվել է բնակավայր, իսկ արևմտյան լանջին՝ ուշբրոնզեդարյան դամբանադաշտ։

9. ԶՈՀՐԱԲՅԱՆ ԱՐՄԻՆԵ ԼԵՒՈՆԻ

Հայաստանի պատմության թանգարան
Պատմական գիտությունների թեկնածու

ԿԱՑԻՆ-ՍԱԿՐԻ ՈՐՊԵՍ ԱՊՐԱՆՔԱՓՈՂԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ և ԾԻՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

Բազմաթիվ սակրաձև առարկաներ են հայտնաբերվել Հայաստանի հնավայրերից, որոնց ծիսական նշանակությունը պայմանավորված է դրանց ապրանքափոխի գործառույթով։ Այդ առումով կարևոր են հայտնաբերված Զրառատի վաղբրոնզեդարյան և Ախթալայի վաղերկաթեդարյան կացինների գանձերը, որոնք զենքի նշանակությունից բացի, ապրանքափոխանակության մեջ եղել են գնային համարժեք՝ օժտված փողի գործառույթով։ Հունական աշխարհում երկսայր կացնի՝ լաբրիսի տարբեր չափի ոսկե, բրոնզե մանրակերտ օրինակներն օգտագործվել են որպես ապրանքափոխ։ Կացինը որպես փող-գնային համարժեք հանդիպում է նաև Հոմերոսի «Իլիականում»։ Կացին, սակր բառն է ընկած Միջագետքում արծաթ-փողի հիմնական կշռային միավորի հիմքում՝ (շումեր. *գին*, աքքադ. *շեքել*)։ Աստվածաշնչում այն բազմիցս հիշատակվում է *սիկլ-սիկղ*

ձևով, որը համահունչ է *սակր* բառին: Լատիներեն *secures* (=կացին) բառն է ընկած *sacrum*՝ սրբազան առարկա բառի հիմքում: Հայերենում մասունք (=սրբազան առարկա) բառի ստուգաբանությունը Հր. Աճառյանը բխեցնում է շումերական *mač*՝ «կես, կտրել, բաժանել» բառից: Դրամի ծագումը կապվում է սրբազան պատկերով առարկաների հետ, որոնք մասնատվում և բաժանվում էին՝ խորհրդանշելով տոհմի անդամի մասնաբաժին: Քարաշամբի գավաթին պատկերված է թագավոր/աստվածը՝ ձեռքին սակր, առջևում ավարը, որը ենթակա է բաժանման: Բաշխող, կտրող, կիսող սրբազան գործողություն իրականացնող գործիք կացինը դարձավ ապրանքափոխի տարածված ձևը: Դիցաբանության մեջ կացին է դառնում այն գործիքը, որը աշխարհը բաժանում է աջ ու ձախ մասի՝ ստեղծելով աշխարհի առանցքը: Տիեզերաստեղծ այդ գաղափարն ընկավ կշեռքի առաջացման հիմքում, որը սերտորեն առնչվում է փողին:

10. ԱՎԱԳՅԱՆ ԻՆԳԱ ԷԴՈՒԱՐԴԻ

ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն
Պատմական գիտությունների թեկնածու

«ԿՈՒՄԱՅՐԻ» ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆԻ ՊԱՀՈՑՆԵՐՈՒՄ ՊԱՀՊԱՆՎՈՂ ԿԱՐՄՐԱՔԱՐԻ ԴԱՄԲԱՐԱՆԱԴԱՇՏԻՑ ԳՏՆՎԱԾ ՊԱՏԱՀԱԿԱՆ ԳՏԱԾՈՆԵՐԻ ՇՈՒՐՋ

«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարանի հնագիտական արշավախումբը Շիրակի երկրագիտական թանգարանի արշավախմբի հետ զուգահեռ պեղումներ կատարեցին Շիրակի մարզի Կարմրաքար գյուղում: Պեղումների ընթացքում հայտնաբերված դամբարաններն ըստ նախնական թվագրման պատկանում էին ուշ անտիկ շրջանին: 1988թ. Սպիտակի երկրաշարժից հետո հավաքածուն այլ թանկարժեք իրերի հետ միասին տեղափոխվում է Հայաստանի պատմության թանգարան: Սույն հավաքածուն 2020 թ. ամռանը հետ է տեղափոխվում Գյումրի և առ այսօր ցուցադրվում թանգարանի ցուցադրությունում: Կարմրաքարի դամբարանադաշտում պեղված հավաքածուն «Կումայրի» արգելոցի յուրօրինակ շքեղ հավաքածուներից մեկն է, այն համալրում է թանգարանի թանկարժեք մետաղների ֆոնդը և թանգարանի թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի ցուցադրության առանցքն է կազմում: Ցավոք իրերը չվնասելու պատճառով փորձագիտական անալիզ չի կատարվել և ոսկու ու արծաթի ճշգրիտ տոկոսային հարաբերությունը այս պահին պարզել հնարավոր չէ, ինչպես նաև անհնար է պարզել թե որ հանքերից են վերցվել թանկարժեք մետաղները: Հավաքածուն բաղկացած է բարձրորակ ոսկե մանյակից, ապարանջանից, ականջօղերից, մատանուց, ուլունքներից, սարդիոնե երկու մատանիներից, որից մեկը կնիք է և ապակե սրվակից, որոնք ըստ նախնական թվագրման պատկանում են ուշ անտիկ դարաշրջանին (Ք. հ. I-IV դդ.):

11. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ ԼՈՒՍԻՆԵ ՍԵՅՐԱՆԻ

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն

ՊՈԱԿ

ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊ ՏԱՊԱՆԱՔԱՐԵՐԸ

Զեկույցը նվիրված է ՀՀ տարբեր տարածաշրջաններից հայտնի կենդանակերպ տապանաքարերի հետազոտությանը: Հայկական մշակույթի ինքնատիպ գոհարների շարքին դասվող և զուտ ազգային մշակույթի ֆենոմեն հանդիսացող տապանաքարերի շարքում առանձնանում են այնպիսի իրական նմուշներ, ինչպիսիք կարելի է համարել կենդանակերպ տապանաքարերը: Այս կոթողները յուրօրինակ են տապանաքարերի զարգացման պատմության մեջ, սակայն հայագիտության կողմից չեն արժանացել բավարար ուշադրության: Մեր օրերում չկա որևէ հավաքական աշխատանք, որը կկարողանա տեղեկություն տալ արվեստի այս եզակի ճյուղի մասին: Հայ միջնադարյան վերգերեզմանային կոթողների մեջ հիմնականում սկսած 16-րդ դարից, հանդես են գալիս կենդանակերպ (խոյակերպ, ավելի քիչ քանակությամբ՝ ձիակերպ) տապանաքարերը: Սրանք, ճիշտ է, թեև հայկական գերեզմանոցներում փոքրաթիվ են, սակայն հանդիսանում են միջնադարյան գերեզմանական մշակույթի բացառիկ երևույթներ: Խոյատապանների օրինակներ գտնվել են Լոռի բերդի, Սիսիանի, Ղափանի, Վարդենիսի, Ապարանի, Ամասիայի, Հին Ջուղայի և այլ գերեզմանոցներից: Ավելի փոքրաթիվ ձիատապանների օրինակներ են պահպանվել Լոռի բերդում և Ջավախքում:

Թերևս էթնիկ նոր տարրերի ներթափանցման և գերիշխանության հաստատման գործընթացները հանգեցրեցին բնիկ մշակութային որոշ համալիրների փոփոխությանն ու ձևախեղմանը, սրանով պայմանավորված՝ խոյաքարերի և ձիաքարերի տարածմանը: Կարելի է ինչ-որ չափով խոյամարտերի տեսարանով պատկերաքանդակները նախահիմք համարել խոյակերպ տապանաքարերին, հատկապես, որ կենդանակերպ տապանաքարերը նույնիսկ իրենց պատկերագրային սյուժեով անխզելիորեն կապված են «խաշնարածի» և զինվորի կերպարի հետ:

12. ԱՎԵՏԻՔ ՂԱԶԱՐՅԱՆ ՎԱՐԴԿԵՍԻ

Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն

ՊՈԱԿ

ԱՎԱՆԻ ՏԱՃԱՐԻ 1219 Թ. ՎԻՄԱԿԱՆ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ԴԱՎԱՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Երևանի Ավան վարչական շրջանի հյուսիսարևելյան հատվածում գտնվող տաճարը հիմնադրվել է VI դ. վերջին՝ որպես քաղկեդոնադավան հակաթոռ կաթողիկոսության աթոռանիստ: Պատմական եզակի արժեք ներկայացնող հուշարձանի վիմական արձանագրություններն անգնահատելի սկզբնաղբյուր են Հայաստանի միջնադարյան պատմության գիտական հետազոտման համար: Տաճարի հինգ արձանագրություններ պահպանվել են արևմտյան պատի ճակատային հատվածում, որանցից վաղեմությամբ առաջինը 1219 թ. վիմագիրն է: Անաղարտ պահպանված արձանագրության ութ տողերը փորագրված են շքամուտքի ճակտոնի

և պատուհանի պսակի միջև: Վիմական արձանագրությունը գիտական քննության առարկա է դառնում XX դարի սկզբից մինչև 70-ական թթ.: Վիմագրի հետազոտմամբ հիմնականում զբաղվել է Կ. Ղաֆադարյանը: Նրա ներկայացրած եզրահանգումների համաձայն՝ արձանագրությունը վերաբերում է Ավանի բնակիչների և Իվանե Զաքարյանի դավանական ընդհանրությանը՝ քաղկեդոնական «միամտութեան»-ը, ինչը հիմք է հանդիսանում վերջինիս համար օժանդակելու ավանցիներին՝ գնման միջոցով վերադարձնելու վաղօրոք իրենց պատկանած հողակտորը՝ «Կուզա»-ն: Իր աշխատանքներում Կ. Ղաֆադարյանը հայտնում է այն համոզմունքը, ըստ որի՝ ավանցիները կարողանում են պահպանել իրենց քաղկեդոնական դավանանքը մինչև XIII դ.: Սույն զեկուցմամբ ներկայացվում են վիմագրի պատմագիտական, լեզվագիտական բազմակողմանի և համադրական քննության արդյունքները, որոնք թույլ են տալիս բացահայտել արձանագրության տնտեսական, վարչատարածքային կառավարման, դավանական, ինչպես նաև բառակազմի իմաստային և պատմական բազմաձալ շերտեր: Այդպիսով հնարավոր է դառնում եզրակացնել, որ 1219 թ. վիմական արձանագրությունը վերաբերում է ոչ թե ավանցիներին, այլ Ավանի տաճարի միաբանությանը, որը թե՛ VII դ. և թե՛ XIII դ. եղել է հայադավան: Արձանագրության առանձին բառամիավորներ ինչպես՝ «ԶԿՈՒԶԱ», «ՄԻԱՄՏՈՒԹԻՒՆ», «ՋԱՋՈՒՌ», «ՅԻՄՈՑ ԿԱՄ ՅԱՒՏԱՐԱՑ» և այլն, ձեռք են բերում լիարժեքորեն տարբեր մեկնաբանություններ և պատմագիտական հստակեցում:

13. ԱԲՐԱՀԱՄՅԱՆ ՀԱՄԱՋԱՍՊ ԹԱԴԵՎՈՍԻ

ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԴԱՇՏԻ 19-20-ՐԴ ԴԱՐԵՐԻ ՀՈՂԱՇԵՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ. ՄԱՍԻՍ ԳՅՈՒՂԻ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑԻ

Հողը հազարամյակներ շարունակ օգտագործվել է ճարտարապետության մեջ: Այժմ էլ այն համարվում է ամենատարածված շինարարական նյութերից ամբողջ աշխարհում: Հողի ճարտարապետությունը կիրառական է եղել գրեթե բոլոր քաղաքակրթություններում: Ճարտարապետության այս տեսակը մեծ կիրառում ունի նաև հայկական մշակույթում: Այստեղ հողն օգտագործվել է պատմության գրեթե բոլոր փուլերում: Հողի կիրառումը փաստագրված է դեռևս քարի դարից և շարունակվելով հասնում է մինչև մեր օրերը: Զեկույցի նպատակն է ներկայացնել Արարատյան դաշտի 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը: Մշակութային այս ժառանգությունը ներկայացնելու համար խնդիր ունենք ուսումնասիրել այս ուղղության ներկայացուցիչներին՝ պարսկահայերին և նրանց վերաբնակեցումը: Որպես դասական օրինակներ՝ կներկայացնենք հողաշեն եկեղեցական համալիրները, դրանց հատակագծային-ծավալային լուծումները, առանձին բաղադրիչները: Զեկույցի շրջանակներում անդրադառնալու ենք նաև հողաշեն եկեղեցիներում հավաստված, տեղափոխված քարե ճարտարապետական դետալներին և առանձին կոթողներին: Այս շարքում ուշադրություն են գրավում անտիկ և միջնադարյան տարբեր տեսակի խարիսխները, որոնց առկայության խնդրին կփորձենք անդրադառնալ այս և հաջորդ մեր աշխատանքներում: Արարատյան դաշտի 19-20-րդ դարերի հողաշեն ժառանգությունը ներկայացնելու համար կարևոր է Մասիս գյուղի ՍԲ Աստվածածին հողաշեն եկեղեցին, որտեղ հնագիտական աշխատանքներ են իրականացվել 2018 թվականին: